ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՆՈՐ ԷՋ ՄԸ ԲԱՑՈՒԵՑԱՒ ՊՐՈՆԶԵԱՅ ՆՈՐ ԴՌՆԵՐՈՒ ՕԾՈՒՄՈՎ

Ս. Վարդան Մայր Տաճարի մուտքի պրոնզեայ նոր դռներու օծումը տեղի ունեցաւ Հոգեգալուստի Կիրակին՝ մայիս 31, 2009, յաւարտ Ս. Պատարագի:

Ս. Վարդան Մայր Տաճարը մուտքի նոր դռներով օժտելու գաղափարը ծնունդ առած է մօտ երեսուն տարի առաջ, ազգային բարերար ողբ. Հայկ Գավուքճեանի տիկնոջ՝ ողբ. Ալիս Գավուքճեանի կողմէ, որ կը գլխաւորէր Մայր Տաճարի Խնամակալ Մարմինը: Ջանազան ձեռնարկներով եւ առիթներով սկսած է դրամահաւաք կատարել՝ դռներու պատրաստութեան հաշուոյն: Ժամանակին որոշ գումար մը հանգանակուած է, սակայն նիւթական անբաւարարութեան պատճառաւ այս ծրագիրի գործադրութիւնը յետաձգուած է: Եօթը տարի առաջ Արժ. Տ. Մարտիրոս Քհնյ. Չեւեան Մայր Տաճարի Լուսարարապետը վերակենդանացուց այս ծրագիրը եւ շնորհիւ Տատուրեան ընտանիքի առատաձեռն նուիրատուութեան՝ կարելի եղաւ գոյացնել անհրաժեշտ գումարը: Դռներու գծագրութեան եւ բարձրաքանդակի պատրաստութեան համար կազմուած էր յանձնախումբ մը, որուն կը մասնակցէին Արժ. Տ. Մարտիրոս քհնյ. Չեւեան, Արժ. Տ. Կարապետ Ա. քհնյ. Քոչաքեան, երէցկին Եւգինէ Մկրտեան եւ Մայքըլ Ցարութիւնեան: Նախապատրաստական աշխատանքները տեսնուելէ ետք՝ վերջնական պատրաստութիւնը յանձնուեցաւ այսպիսի գործերու մասնագէտ Սեդրակ Ակոնեանի: Դռներուն վրայ քանդակուած են մեր քրիստոնէութեան ծնունդը խորհրդանշող Տրդատ Թագաւորի մկրտութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորիչի ձեռքով՝ ի ներկայութեան Աշխէն Թագուհիի՝ Ս. Էջմիածնի եւ Մասիսներու հովանիին ներքեւ:

Օրուան պատարագիչն էր Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան: Երգեցողութիւնը կատարեց Մայր Տաճարի դպրաց դասը՝ ղեկավարութեամբ Խորէն Մէյխանէճեանի: Ներկայ էին Գերշ. Տ. Եղիշէ արք. Կիզիրեան, Հոգշ. Տ. Հայկազուն Ծ. վրդ. Նաճարեան՝ Առաջնորդի Փոխանորդը, Հոգշ. Տ. Սուրէն Ծ. վրդ. Չինչինեան՝ լուսարար Ս. Վարդան Մայր Տաճարի, Հոգշ. Տ. Բաբգէն աբղ. Սալբիեան՝ Ջաւախքի Փոխ Առաջնորդը, Արժ. Տ. Արտէն Ա. քհնյ. Աշճեան՝ Մայր Տաճարի նախկին լուսարարապետը եւ Արժ. Տ. Կարապետ Ա. քհնյ. Քոչաքեան՝ Տիթրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւը:

Պատարագիչ Առաջնորդ Սրբազան Հայրը քարոզին բնաբան ընտրած էր Գործք Առաքելոցի Բ. գլուխ 2-4 համարները, ուր կ՚ըսուէր. «Եւ եղեւ յանկարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրեւ սաստիկ հողմոյ, եւ ելից զամենայն տունն յորում նստէին: Եւ երեւեցաւ նոցա բաժանեալ լեզուք իբրեւ ի հրոյ, եւ նստաւ իւրաքանչիւր ի վերայ նոցա: Եւ լցան ամենեքեան Հոգւով Սրբով, եւ սկսան խօսել յայլ լեզուս որպէս եւ Հոգին տայր բարբառել նոցա»: Եւ պատմեց թէ ինչպէս երբ առաքեալները վերնատան մէջ հաւաքուած էին, Վարդապետի համբարձումէն ետք, եւ իրենց Մխիթարիչին կը սպասէին: Այս պահուն էր որ Սուրբ Հոգին կրակէ լեզուներ-

րու նման հանգչեցաւ իրենց վրայ եւ ամոնցմէ ամէն մէկը նոր անձ մը դարձաւ եւ Քրիստոսի հրահանգով անոնք գացին աշխարհի զանազան կողմերը եւ ժողովուրդներուն քարոզեցին այն ինչ որ իրենց Վարդապետէն սորված էին, մկրտութիւններ կատարեցին Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին անունով եւ զանոնք դարձուցին Քրիստոսի աշակերտները: Այդ առաքեալներէն երկուքը՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս սկսան Հայերէն խօսիլ եւ Հայաստան գալով ցանեցին քրիստոնէութեան սերմերը, որոնք աճելով 301 թուականին Ս. Գրիգոր Լուսաւորիչի միջոցաւ Հայոց Տրդատ Թագաւորը քրիստոնեայ մկրտուեցաւ եւ Քրիստոնէութիւնը պետական կրօնք հռչակուեցաւ: Եւ աւելի քան 1700 տարի մեր ժողովուրդը հաւատարիմ մնաց Քրիստոսի եւ հակառակ բազում արհաւիրքներու եւ ցեղասպանութեան երբեք չուրացաւ իր խոր հաւատքը: Մեր ժողովուրդին վիճակուած 20-րդ դարու առաջին ցեղասպանութենէն վերապրողներն են որ իրենց հաւատքի զօրութեամբ կանգնեցին Ս. Վարդան Մայր Տաճարը եւ այսօր ալ, Հոգեգալստեան փօնին, մենք հաւաքուած ենք այստեղ օծելու արտաքին պրոնզեայ նոր դռները՝ նոր էջ մը բանալով Մայր Տաճարի պատմութեան մէջ:

Առաջնորդ Սրբազան Հօր քարոզէն ետք էր որ Մայր Տաճար մուտք գործեց Նիւ Եորքի քաղաքապետ Մայքըլ Պլումպըրկ, որ հետեւեցաւ Ս. Պատարագի արարողութեան: Մայր Տաճարի բակին մէջ քաղաքապետը դիմաւորեցին Առաջնորդարանի Թեմական Խորհուրդի անդամները եւ Ս. Վարդան Մայր Տաճարի «Շուշի» պարախումբը: Ս. Պատարագի աւարտին՝ Սրբազան Հայրը, աւելի քան 800 հաւատացեալներուն ներկայացուց քաղաքապետը հետեւեալ բառերով. «Մեզի համար մեծ հաճոյք եւ պատիւ է Մայր Տաճարին մէջ ողջունել արժանաւոր ղեկավարը եւ այս մեծ քաղաքի քաղաքապետը՝ Մայքըլ Պլումպըրկը՝ որպէս բարեկամ եւ մեր ընտանիքի անդամը: Քառասուն տարի առաջ՝ երբ Ս. Վարդան Մայր Տաճարը իր դռները բացաւ՝ օրուան քաղաքապետ Ճան Լինձին այցելեց: Յաջորդ տարիներուն պատիւը ունեցանք վայելելու ներկայութիւնը քաղաքապետներ Քաչի, Տինքինզի եւ Ճուլիանիի: Այսօր, յարգելի տիար քաղաքապետ, մենք խորապէս ազդուած ենք ձեր ներկայութենէն եւ այն բացառիկ առիթէն, զոր ձեր ներկայութեամբ պատուեցիք մեզի՝ այնպիսի օր մը, որ մեծ նշանակութիւն ունի մեզի համար:

Քաղաքապետ Պլումպըրկ պատասխանելով Առաջնորդ Սրբազան Հօր ըսաւ. «Այսօր, Ս. Վարդան Մայր Տաճարի պատմութեան մէջ նոր էջ մը կը բացուի: Այս հաստատութիւնը մեծ նշանակութիւն ունի ձեզի եւ ամբողջ Հայութեան համար. սքանչելի աղօթքի տուն մը, որ Նիւ Եորքը հպարտ իր է «տան» մէջ ունենալու»: Աւելցուց նաեւ որ երբ ի մտի ունենանք որ այս Տաճարը կառուցողները հայկական ցեղասպանութենէն վերապրողներն են՝ այդ պարագան զօրաւոր յուշարար մը կ՚ըլլայ բոլոր մարդկութեան՝ որ տառապանքի մոխիրներէն յառնած հոգիներ ինչպիսի ճարտարութիւն ունեցած են ստեղծելու այսպիսի գեղեցկութիւն մը:Առաջնորդ Սրբազան Հայրը եւ քաղաքապետը դուրս ելան եւ միասնաբար վար առին նոր դռները ծածկող վարագոյրը:

Ապա՝ բոլոր հաւատացեալները հաւաքուեցան Մայր Տաճարին բակը, հոգեւորականները, սարկաւագներն ու դպրաց դասի անդամները թափօր կազմեցին եւ յառաջացան դէպի Մայր Տաճարի մուտքը, ուր մասնաւոր արարողութեամբ Առաջնորդ Սրբազան Հայրը կատարեց նոր դռներուն օծումը:

Այս հոգեպարար արարողութենէն ետք՝ «Շուշի» պարախումբը շատ յաջող ելոյթ մը ունեցաւ: Պարախումբի ղեկավարն է Սեդա Փասքալեան-Գանթարճեան:

Տօնակատարութիւնը շարունակուեցաւ Առաջնորդարանի Հայկ եւ Ալիս Գաւուքճեան հանդիսասրահին մէջ ընդունելութեամբ եւ մասնաւոր յայտագիրով:

Ցայտագիրը վերջանալէ ետք՝ բոլոր ներկաները դարձեալ բարձրացան Մայր Տաճարի բակը մօտէն տեսնելու եւ վայելելու մուտքի նոր դռները, իսկ ոմանք համբուրեցին Ս. Միւռոնով օծուած դռները:

Ներկաները այցելեցին նաեւ Առաջնորդարանի «ՃԻ» սրահին մէջ կազմակերպուած ցուցահանդէսին, ուր նկարներով կը ցուցադրուէր նոր դռներու պատրաստութեան եւ գործադրութեան պատմութիւնը: Այս ցուցահանդէսին պատասխանատուն էր Ալիս Տէմիրճեան՝ օժանդակութեամբ Մելիսա Տատուրեանի եւ Հէրմը Տատուրեանի:

Մայիս 31-ի Հոգեգալստեան Տօնը եւ Ս. Վարդան Մայր Տաճարի նոր դռներու օծումը երկար ատեն պիտի ոգեւորէ, քաջալերէ ու խանդավառէ բոլոր ներկաներուն սրտերն ու հոգիները:

Դիւան առաջնորդարանի

ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 7-ին Էջմիածնի փարածաշրջանի Աղավնատուն համայնքում նախագահությամբ Արմավիրի թեմի Առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանի եւ մասնակցությամբ թեմի հոգեւոր դասի կատարվեց գյուղի նորակառույց եկեղեցու 16 վեմ քարերի օծման արարողություն:

Գյուղի եկեղեցին կառուցվում է Աղավնատնից, ներկայիս մոսկվաբնակ տիար Վահան Ավագյանի բարերարությամբ:

Աղավնատան բնակիչները մեծ ցնծության ու խանդավառության մեջ էին, որ 15 տարի առաջ եկեղեցու հիմքերը կառուցված տեղում, այժմ իրենց համագյուղացու բարերարությամբ ունենալու էին եւս մեկ շատ կարեւոր տուն՝ աղոթքի տուն, որտեղ հավատքի զորությամբ պետք է ընտանիքներ կազմվեն, երեխաներ մկրտվեն, Սուրբ պատարագներ մատուցվեն:

Այդ օրը գյուղում Երեւանի Մարի Իզմիրյանի անվան մանկապան 25 երեխաներ թեմի առաջնորդի ձեռամբ ստացան մկրտություն: Որտեղ երեխաներն են օթեւանում, այնտեղ իր մեծ նվիրումն ու աջակցությունն է բերում բարերար Վահան Ավագյանը, որ այսուհետ երեխաների կնքահայրն է: Սուրբ արարողության ավարտին բոլորին բաժանվեց մատաղ, իսկ երեխաներին անահատական նվերներ :

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԹԱՓՈՐ ԵՒ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ Ս. ՀՌԻՓՍԻՄՅԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Հունիսի 8-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Ս. Հիփսիմյանց կույսերի պայծառ հիշատակը:

Օրվա առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջնորդությամբ եկեղեցականաց հանդի-

սավոր թափորով եւ Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ հովանու ներքո գործող հայորդյաց տների սաների թմբուկների ձայների ազդարարությամբ Ս. Հռիփսիմե վանք տարվեց Ս. Էջմիածնում պահվող՝ սրբուհու մասունքով Սուրբ Աջը:

Այնուհետեւ Ս. Հռիփսիմե վանքում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Ս. Հռիփսիմեի վանահայր Տ. Մատթեոս աբեղա Պողոսյանը: Հընթացս սրբազան արարողության Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով Ս. Հռիփսիմյանց կույսերի նահատակության պատմությանը եւ դրա կարեւոր խորհրդին Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման սրբազան գործում:

Պատարագի ընթացքում Հայաստանի տարբեր շրջաններից վանք ժամանած բազում ուխտավորներ առիթ ունեցան մոտենալու եւ օրհնություն ստանալու Ս. Հռիփսիմեի մասունքներից:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԹԱՓՈՐ ԵՒ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ Ս. ԳԱՅԱՆՅԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Հունիսի 9-ին Հայ Առաքելական Եկեղեցին տոնախմբեց Ս. Գայանյանց կույսերի պայծառ հիշատակը:

Առավոտյան եկեղեցականների հանդիսավոր թափորով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջնորդությամբ, տոնի շարականների երգեցողության ներքո Մայր Աթոռից Ս. Գայանե վանք տարվեց սրբի մասունքով Ս. Աջը:

Օրվա առիթով Ս. Պատարագ մատուցվեց սրբի նահատակության վայրում կառուցված Ս. Գայանե վանքում: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: Հընթացս սրբազան արարողության Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով քրիստոնյայի կյանքում սրբության գաղափարին:

«Այսօր, Ս. Գայանյանց սուրբ կույսերի հիշատակության այս օրը, կանգնած այս սրբասուրբ տաճարի մեջ կույսերի մասունքների առջև, մեր ուխտն ենք նորոգում, աղոթք բարձրացնում առ Աստված, որպեսզի լինենք հավատարիմ մեր կյանքի սրբության կոչումի մեջ: Ուստի եկեք այս ուխտի օրը միասնաբար խնդրենք Աստծո իմաստությունը և շնորհները, որպեսզի մեզ առաջնորդի Իր արդար ճանապարհներով՝ ապրելու և արժանի լինելու այն սրբության, որով իրենց կյանքն ապրեցին ու իմաստավորեցին Ս. Գայանյանց կույսերն ու մեր լուսավոր հայրերը: Եկեղեցին միշտ կանգուն է, միշտ կենդանի է ու շնչում է իր անցյալի ու ներկայի սուրբերով, ձեզանով՝ սիրելի հավատացյալներ, որովհետև Ս. Հռիփսիմյանց և Գայանյանց կույսերը ձեզ նման ազնիվ հավատացյալներ էին, ովքեր իրենց կյանքը ուխտի ճանապարհով զոհեցին», - նշեց Հայր Վարդանն իր քարոզում:

Պատարագի վերջում Ամենայն Հայոց Հայրապետը սրբազան մասունքով վերստին օրհնեց հավատացյալներին, ապա ներկաները հնարավորություն ունեցան համբուրելու Ս. Գայանեի մասունքով Աջը եւ ստանալու

«ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇԱԲԱԹ

Հունիսի 9-ին Արմավիրի թեմի առաջնորդ Տ Սիոն եպիսկոպոս Ադամյանի օրհնությամբ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի մշակույթի տան փոքր դահլիճում մեկնարկեց «Երեխաները երեխաների համար» մշակութային շաբաթը:

Արդեն երկրոդ տարին է, որ հունիս ամսին երեխաները մի քանի օր շարունակ հնարավորություն են ունենում շփվելու արվեստի աշխարհի հետ:

Նախաձեռնության հեղինակը «Ջանգակատուն» բարեգործական հասարակական կազմակերպության Մեծամորի «Սուրբ Ղազար» համայնքային զարգացման կենտրոնն է, որը վերջին տարիներին գործում է Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական «Կլոր սեղան» հիմնադրամի հովանավորության ներքո:

Բեմում կենտրոնի սաներն էին՝ «Արեւածաղիկ» երգչախումբը /ղեկավար՝ Նարինե Հակոբյան/ եւ «Փալանջո» տիկնիկային թատրոնը /ռեժիսիոր՝ Գրիգոր Հովհաննիսյան/: Փոքրիկ համերգից հետո ներկայացվեց Հովհ. Թումանյանի «Անբան Հուռին» հեքիաթը:

Հանդիսատեսը ջերմ ծափողջույններով վարձատրեց իր հասակակից երգիչներին ու դերասաններին համայնքների երեխաները:

Այս տարի բացի Մեծամորի երեխաներից համերգն ու ներկայացումները կդիտեն նաեւ Արմավիր, Ակնալիճ, Մրգաշատ, Մայիսյան, Հացիկ եւ այլն:

ԿԱՏԱՐՎԵՑ ՆՈՐ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԲԱՑՈՒՄ

Հունիսի 11-ին կատարվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հարեւանությամբ գտնվող մանկական խաղահրապարակի նոր հատվածի բացման արարողությունը: Դեռեւս 2003 թ. «Գուլամերյան» հիմնադրամի հովանավորությամբ կառուցված խաղահրապարակի նոր հատվածի եւ նոր սարքավորումների բարերարներն են սիրիաբնակ տեր եւ տիկին Գաբրիել Ջամբարջիները, ովքեր ազգային կյանքում տարբեր ծրագրերի հետ մեկտեղ իրենց նվիրյալ եւ ազնիվ ոգով նաեւ աջակցություն են բերում Հայ Եկեղեցու հովանու ներքո գործող Հայորդյաց տների առաքելությանը եւ տարբեր կրթական ծրագրերին:

Խաղահրապարակի կարմիր ժապավենը կտրեցին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը եւ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի տնօրեն Սուրեն Նալջյանը: Ապա հանդիսապետությամբ Արշակ Սրբազանի կատարվեց խաղահրապարակի օրհնության արարողությունը, որից հետո ներկաներին դիմեց հայորդյաց տների հոգեւոր տեսուչ Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանը՝ անդրադառնալով մանուկների ժամանցն ու հանգիստը բարվոք կազմակերպելու գործում Մայր Աթոռի կարեւոր այս նախաձեռնությանը:

Ներկաներին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը փոխանցեց Մայր Աթոռի դիվանապետը: Իր ուրախությունը հայտնելով նոր խաղահրապարակի բացման առիթով՝ Արշակ Սրբազանը հանուն Նորին

Սրբության մասնավոր գնահատանք հայտնեց Էջմիածնի ներկայիս եւ նախկին քաղաքապետերին՝ ծրագրին ըստ ամենայնի աջակցելու համար, ինչպես նաեւ խաղահրապարակի բարերարներին իրենց ազգօգուտ եւ եկեղեցաշեն ծառայությունների եւ այս ուրախալի ձեռնարկի համար:

Վերջում այգում ազգային պարի կատարումներով հանդես եկան Էջմիածնի Հայորդյաց տան սաները:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ ՍԵՒԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԱՐԵՒԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՎ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հունիսի 24-ին Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ, Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բացվեց արեւային ջրատաքացուցիչներով տաք ջրամատակարարման համակարգը: Բացման արարողությանը ներկա էին Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանը, ՀՀ Բնապահպանության փոխնախարար Սիմոն Պապյանը, Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրից՝ ՄԱԿ-ի մշտական ներկայացուցչի տեղակալ Դիրկ Բոբերգը, ԵՀԽ Հայաստանյան Միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանը, Մայր Աթոռի միաբաններ եւ ուսանողներ:

Դպրանոցի տարածքում տեղադրված 60 ք.մ. ընդհանուր մակերեսով արեւային ջրատաքացուցիչ կոլեկտորների համակարգի միջոցով ապահովվում են Սեւանի Վազգենյան դպրանոցի տաք ջրամատակարարման կարիքները: Համակարգի գործարկումը հնարավորություն կընձեռի տարեկան ստանալ 1500 խ.մ., մոտավորապես 45 C° ջերմաստիճանի ջուր:

Դեռեւս 2008թ. ՀՀ Բնապահպանության նախարարության եւ ՄԱԶԾ/ԳԷՖ-ի կողմից իրականացվող «Հայաստան. քաղաքային ջեռուցման եւ տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ծրագրի եւ Կլոր սեղան հիմնադրամի միջեւ ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակներում իրականացվեցին համակարգի նախագծման եւ տնտեսական գնահատման աշխատանքները: Համակարգի տեղադրման աշխատանքները կատարել է «Սոլարէն» մասնագիտացված ընկերությունը:

Արարողությունը բացվեց դպրանոցի տեսուչ Տ. Գեորգ աբեղա Սարոյանի ողջույնի խոսքով: Նա ներկայացրեց դպրանոցի «Կանաչ ասպվածաբանություն» ծրագիրը, որի մասն է կազմում նաեւ այս ծրագիրը: Ապա արեւային ջրատաքացուցիչների համակարգի կարեւորությանն անդրադարձան ՀՀ Բնապահպանության փոխնախարարը, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի մշտական ներկայացուցչի տեղակալը եւ Կլոր սեղան հիմնադրամի տնօրենը:

Վերջում, մինչ ժապավենը կհատվեր պրն. Դիրկ Բոբերգի եւ Կարեն Նազարյանի կողմից, ներկաներին իր օրհնության խոսքը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն իր մասնավոր գնահատանքը հայտնեց բոլոր նրանց, ովքեր նպաստել են կարեւոր այս ծրագրի իրականացմանը: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ողջունեց «Կանաչ ասպվածաբանություն», որը մեծ նշանակություն ունի ապագա հոգեւոր հովիվների

կրթության համար, քանի որ սովորեցնում է մարդուն հոգատար լինել Աստծո արարչագործության եւ ի մասնավորի բնության հանդեպ: Նորին Սրբությունը նկատեց, որ արեւային, էկոլոգիապես մաքուր էներգիայի օգտագործման այս ծրագիրը խանդավառող օրինակ կարող է ծառայել այլ կառույցներին եւ կազմակերպություններին՝ բնապահպանական տեսակետից նախընտրելի եւ մաքուր տեխնոլոգիայի տարածման համար: Արարողությունից հետո իրենց կատարումներով հանդես եկան դպրանոցի սաները:

Վերջին տարիներին Վազգենյան դպրանոցը, Կլոր սեղան հիմնադրամի աջակցությամբ, լրջորեն զբաղվում է բնապահպանական խնդիրներով: 2006թ. կազմակերպվեցին կլիմայի փոփոխության եւ բնապահպանության արդի խնդիրներին նվիրված ամառային դասընթացներ:

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ

Հունիսի 22-26-ը՝ Ծաղկաձորում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը «World Vision» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացրեց Հայ Առաքելական Եկեղեցու հայաստանյան թեմերում գործող կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների վերապատրաստումներ, որոնց մասնակցեցին 80-ից ավելի ուսուցիչներ ավելի քան 50 կիրակնօրյա կրթօջախներից:

Դասընթացների հանդիսավոր բացումը կատարվեց Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի օրհնությամբ: Ապա ողջույնի խոսքով հանդես եկավ «World Vision»-ի հայաստանյան գրասենյակի՝ եկեղեցու հետ կապերի պատասխանատու Կարինե Հարությունյանը:

Վերապատրաստումների ընթացքում սուրբգրային, դավանաբանական, Հայոց Եկեղեցու տոնածիսական համակարգին, խորհուրդներին, բարեպաշտական սովորություններին վերաբերող, ինչպես նաեւ մեթոդաբանական թեմաներով բանախոսություններով հանդես եկան Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը, Տ. Արտակ վարդապետ Տիգրանյանը, Տ. Խորեն աբեղա Առաքելյանը, Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը, Տ. Պարույր քահանա Ավետիսյանը, Արարատյան Հայրապետական թեմի Երեւանի Սուրբ Երրորդություն եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Եսայի քահանա Արթենյանը, Հայաստանյան Աստվածաշնչային ընկերության գրասենյակի ծրագրերի տնօրեն Արշավիր Գաբուջյանը, ՔԴԿ Աբովյանի տարածաշրջանի պատասխանատու Արուսյակ Տերջանյանը:

Դասախոսություններին հաջորդեցին խմբային քննարկումները, որոնց ընթացքում ուսուցիչների կողմից առաջադրվեցին մեթոդներ «Ուսուցիչ-աշակերտ», «Ուսուցիչ-ծնող», «Ուսուցիչ-եկեղեցի» եւ «Աշակերտ-ծնող» փոխգործակցության կայացման համար:

Վերջում ուսուցիչներին բաշխվեց հոգեւոր գրականություն եւ վկայականներ: